ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ Տ. Տ. ԽՈՐԵՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ՝ ԵՐՋԱՆԿԱՀԻՇԱՏԱԿ ՋԱՐԵՀ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՄԱՀՎԱՆ ՏԱՐԵԼԻՑԻ ԱՌԹԻՎ

ՎԱՋԳԷՆ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ, ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ԿԱՄՕՔՆ ԱՋԳԻՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ, ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՄԱՋԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՌՈՅ ԱՅՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ

ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹԻՒՆ Տ. Տ. ԽՈՐԵՆԱՅ ԱՌԱՋՆՈՅ ՇՆՈՐՀԱՋԱՐԴ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ, ՔՐԻՍՏՈՍԱՒԱՆԴ ՍԻՐՈՅ ՈՂՋՈՅՆ

ՅԱՆԹԻԼԻԱՍ

Այսօր, երբ Ձերդ Սրբութիւնը և Աթոռիդ միաբանութիւնն ու ժողովուրդը երկիւղածութեամբ կ՚ոգեկոչեն յիշատակը հանգուցեալ **Զարեհ Ա Կաթողիկոսին,** Մենք եղբայրաբար Ձեր կողքին կը գտնուինք, Ձեզի վշտակից և Ձեզի աղօթակից:

Մեծ վիշտ մը եղաւ, այո՛, նաև Մեզի համար, վաղաժամ ու ողբերկագան մահը սիրեցեալ **Զարեհ** եղբօրը Մեր, որմէ եօթը տարիներ առաջ, տխուր օր մը, սիրոյ համբուրիւ բաժնուած էինք, ուրախ օր մը վիրար վերստին ողջունելու յոյսով: Քանի անգամներ, Մեր սրտի բովանդակ ջերմութեամբ, փնտռեցինք Մենք այդ ուրախ օրը, որ սակայն, աւա՜ղ, ուշացաւ, և հոգելոյս Հայրապետը Իր աչքերը փակեց տրտում, յուսաբեկ:

Այսօր, մեզի ամենուս կը մնայ աղօթել միայն, որ Տէրը յաւերժական խաղաղութեան մէջ, սուրբ և պայծառ պահէ հանգուցեալ Հայրապետի բարի ու արդար հոգին, հոգի մը, որ շատ սիրեց իր Մայր Եկեղեցին և իր ժողովուրդը համայն, հոգի մը, որ լուռ տառապեցաւ անոնց ցաւերով, և անձայն շիջեցաւ, ըսելու համար բոլոր հայերուն՝ **«Սիրեցէք կմիմեանս»:**

Այսօր, Մեր աղօթքին մէջ կայ նաև լոյսը և հաւատքը վառ, թէ կենդանի է Անոր լոյս հոգին, որ այժմ բոլորովին անխտիր կը բաշխուի իբրև սիրոյ և միութեան և խաղաղութեան խորհուրդ:

Երակաշնորհ Հայրապետի յիշատակին առաջ, մեր սուրբ սեղաններուն բոլոր սպասաւորները և մեր ազգին բոլոր կաւակները անգամ մը ևս թող ուխտեն՝ մէկ և ամբողջ ու անխառով պահպանելու Հայաստանեայց Ս. Եկեղեցին և համայն ժողովուրդը հայոց:

Ամենայն հայոց Մայր Աթոռ Ս. Էջմիածնէն և Հայաստանի Մայր Հողէն՝ ողջոյն և օրհնութիւն աստուածային՝ հանգուցեալ **Զարեհ Ա Կաթողիկոսի** լոյս յիշատակին:

Թող Աստուած հարցն մերոց անշարժ պահէ քրիստոսակերտ մեր Ս. Եկեղեցին, և յաւէտ կենդանի ու շէն հաւատացեալ ժողովուրդը մեր, մէկ ու անբաժան:

Փրկչի Իջման Ս. Տաճարին մէջ, Մեր նախագահությամբ հանդիսաւոր հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի կիրակի 16 փետրուարին, երջանկայիշատակ Հայրապետի մահուան առաջին տարելիցին առթիւ: Հրահանգած ենք մեր բոլոր թեմերուն, որ նոյն առթիւ հոգեհանգստեան պաշտօն կատարեն իրենց եկեղեցիներուն մեջ:

Ձերդ Սրբութեան աղօթակից Եղբայր՝

ՎԱԶԳԵՆ Ա
ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս 1-3-ն փետրուարի
1964 Փրկչական ամի,
և ի տումարիս Հայոց ՌՆԺԳ,
ի մայրավանս Սրբոյ Էջմիածնի: